

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

**«Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին»
օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1160-01.10.2025-ՖՎ, ԱՍ, ՏՀ, ԱռՀ, ՏՏԳՇ,
ՏԵ, ՊԻ, ԱՀ, ՊԱ, ԳԿ, ԵԻ, ՄԻ -011/0) վերաբերյալ**

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1160-01.10.2025-ՖՎ, ԱՍ, ՏՀ, ԱռՀ, ՏՏԳՇ, ՏԵ, ՊԻ, ԱՀ, ՊԱ, ԳԿ, ԵԻ, ՄԻ -011/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Նախագծի մի շարք հոդվածներում կիրառվում է «դրամ» հասկացությունը, իսկ Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության դրամ» հասկացությունը: Նախագծի ամբողջ տեքստում առաջարկում ենք միևնույն միտքն արտահայտելիս կիրառել միևնույն բառերը՝ որոշակի հերթականությամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված պահանջը՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»: Առաջարկում ենք Նախագծի ամբողջ տեքստում կիրառել «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» օրենքի 3-րդ հոդվածի չհամարակալված 1-ին պարբերության 1-ին կետի «ա» ենթակետում սահմանված հասկացությունը, այն է՝ «Հայաստանի Հանրապետության արժույթը՝ Հայաստանի Հանրապետության դրամը», հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝ «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրաժանոթ հասկացություններ կամ տերմիններ»:

2. Նախագծի 5-րդ հոդվածում կիրառվում է «Հայաստանի Հանրապետության կառավարություն» հասկացությունը, մինչդեռ «Հայաստանի Հանրապետության կառավարություն» հասկացության կրճատ տարբերակը «(այսուհետ՝ Կառավարություն)», սահմանված է Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում: Հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է հետևյալ իրավակարգավորումը՝ «Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը»: Այսպես՝ հաճախակի կիրառվող երկար արտահայտության կրճատ տարբերակը նախ պետք է սահմանել 1-ին իսկ կիրառումից հետո: Հիմք ընդունելով

վերոգրյալն, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝ առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում չսահմանել քննարկվող հասկացության կրճատ տարբերակը, Նախագծի ամբողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «Կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով:

3. Հարկ ենք համարում նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտում կարող է կիրառվել կա՛ն «և», կա՛ն «կամ» շաղկապը, մինչդեռ «և (կամ)» գրելաձևը կիրառելի չէ: Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի ամբողջ տեքստում վերանայել քննարկվող շաղկապների կիրառությունը:

4. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում և նույն հոդվածի 22-րդ մասում առաջարկում ենք «ՀՀ» հապավումը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ «Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ»:

5. Նախագծի 9-րդ հոդվածի 12-րդ մասի 4-րդ կետում նշված «23-րդ հոդվածի 1-ին կետին» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «23-րդ հոդվածի 1-ին մասին» ձևակերպմամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի»:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված իրավակարգավորումներում Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ՝ ներկայացված առաջարկությունների հիման վրա անհրաժեշտ է ապահովել Նախագծի համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)

13.10.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)

13.10.2025թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

«Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ) քննարկվել է ՀՀ ԱԺ աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության ֆինանսատնտեսագիտական փորձաքննության բաժնում:

Նախագիծը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությամբ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև բյուջետային հարաբերությունները կարգավորող մյուս օրենքներով սահմանված պահանջներին:

Նախագծի ուսումնասիրության և քննարկման արդյունքում ձևավորվել են մի շարք նկատառումներ, որոնցից հիմնականները կայանում են հետևյալում:

1. 2026 թվականին հանրապետության տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների գծով կանխատեսումները նախորդ տարիների համեմատությամբ բավականաչափ համեստ են (տես աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1.

Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների դինամիկան 2022-2026
թվականներին

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2022	2023	2024	2025	2026
	Փաստ.	Փաստ.	Փաստ.	Սպասում	Ծրագիր
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	8,501.4	9,492.5	10,193.4	10,997.1	11,933.7
Տնտեսական աճ, %	12.6	8.3	5.9	5.2	5.4
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	8.0	3.1	1.4	2.6	3.0
Գնաճ (Ժամանակ. վերջ), %	8.3	-0.6	1.5	3.2	3.1
Գնաճ (միջին), %	8.6	2.0	0.3	3.3	3.1

Մասնավորապես, ըստ ՀՀ կառավարության կանխատեսումների, անվանական ՀՆԱ-ն 2026 թվականին կկազմի մոտ 11.9 տրիլիոն դրամ, որը մոտ 8.5 տոկոսով (կամ 936 մլրդ դրամով) գերազանցում է ընթացիկ տարվա կանխատեսվող մակարդակը և 17 տոկոսով (կամ մոտ 1.7 տրիլիոն դրամով)՝ 2024 թվականի փաստացի մակարդակը: Ըստ

կանխատեսումների, 2026 թվականին տնտեսական աճի տեմպը գրեթե չի փոխվի և 2025 թվականին ակնկալվող 5.2 տոկոսի դիմաց կկազմի 5.4 տոկոս, ինչը, չնայած բարձր է 2025 թվականին ակնկալվող ցուցանիշից, սակայն զիջում է 2024 թվականի փաստացի տնտեսական աճի 5.9 տոկոս ցուցանիշին: Այդուհանդերձ, կարծում ենք, որ առաջիկա տարվա համար ակնկալվող տնտեսական աճի ցուցանիշը կարևոր նախադրյալ կարող է հանդիսանալ տնտեսության հետագա զարգացման համար:

2. Տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի ապահովումը 2026 թվականին հիմնականում կախված կլինի նաև երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունից, ինչպես նաև արտաքին տնտեսական այլ գործոններից և համաշխարհային տնտեսության զարգացումներից: Համաձայն 2026 թվականի բյուջետային ուղերձի, առաջիկա տարում արդյունաբերությունը կաճի 8.2 տոկոսով, գյուղատնտեսությունը՝ 2.7 տոկոսով, ծառայությունների ոլորտը՝ 4.8 տոկոսով, շինարարության ոլորտը՝ 5.8 տոկոսով: Կարծում ենք, տնտեսական աճի ճյուղային կառուցվածքի առումով բավականաչափ հուսադրող է այն, որ առաջիկա տարում տնտեսական աճի ապահովման հարցում հիմնական դերը կպատկանի արդյունաբերությանը, որի գծով աճը վերջին չորս տարիների ամենաբարձր ցուցանիշն է:

Աղյուսակ 2.

ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների (%)

	2022	2023	2024	2025	2026
	Փաստ	Փաստ	Փաստ	Մպաստում	Ծրագիր
Արդյունաբերություն	6.9	-3.0	3.6	0.2	8.2
Գյուղատնտեսություն	-2.8	-0.4	1.5	3.4	2.7
Շինարարություն	18.6	15.6	14.1	16.0	5.8
Ծառայություններ	18.4	12.5	7.5	4.2	4.8
Զուտ հարկեր	8.1	11.0	-1.6	12.6	5.7

Տնտեսության ճյուղային կառուցվածքի առումով, մեր կարծիքով, իրականացվելիք տնտեսական քաղաքականության նպատակային թիրախներ պետք է դառնան հարկուսակ ճյուղերի զարգացումը, միաժամանակ՝ համեստ դերակատարում վերապահելով հարկազատված ոլորտներին: Այլ կերպ ասած, կարևորելով երկրում տնտեսական աճի

ապահովումը, միևնույն ժամանակ, պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի բարելավման ուղղությամբ, ինչը կնպաստի հարկային բեռի հնարավորինս համաչափ բաշխմանը և, դրանով իսկ, բյուջետային եկամուտների ավելացմանը:

3. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի նախագծում եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 3 տրիլիոն 091.0 մլրդ դրամի չափով, 2025 թվականի սպասվող 2 տրիլիոն 832.8 մլրդ դրամի և 2024 թվականի փաստացի 2 տրիլիոն 579.2 մլրդ դրամի դիմաց: Այլ կերպ ասած, առաջիկա տարվա բյուջետային եկամուտների պլանավորված ծավալն ընթացիկ տարվա ցուցանիշը գերազանցում է մոտ 9.1 տոկոսով կամ 258.2 մլրդ դրամով (տես աղյուսակ 3-ը):

Աղյուսակ 3.

Բյուջետային եկամուտների աճի դինամիկան 2022-2026 թվականներին (մլրդ դրամ)

Ցուցանիշներ	փաստացի			սպասում	ծրագիր
	2022	2023	2024	2025	2026
Պետական բյուջեի եկամուտներ	2,099.6	2,410.7	2,579.2	2,832.8	3,091.0
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,962.5	2,273.9	2,390.9	2,690.4	2,972.9
Այլ եկամուտներ	122.1	123.7	161.6	96.6	97.7
Պաշտոնական դրամաշնորհներ	15.0	13.1	26.7	20.7	20.5

2026 թվականին բյուջետային մուտքերի կազմում ամենամեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը և պետական տուրքերը՝ 2 տրիլիոն 972.9 մլրդ դրամ՝ 2025 թվականին սպասվող 2 տրիլիոն 690.4 մլրդ դրամի, 2024 թվականի, 2023 թվականի և 2022 թվականի փաստացի մուտքերի համապատասխանաբար՝ 2 տրիլիոն 390.0 մլրդ դրամի, 2 տրիլիոն 273.9 մլրդ դրամի և 1 տրիլիոն 962.5 մլրդ դրամի դիմաց:

Պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի համապատասխանաբար՝ 20.5 մլրդ դրամը և 97.7 մլրդ դրամը (ընդհանուր եկամուտների համապատասխանաբար 0.7%-ը և 3.2%-ը): Հարկ է նշել, որ

պետական բյուջեի եկամտային կառուցվածքում բոլոր եկամտատեսակների գծով տեղի կունենա անվանական աճ, բացառությամբ պաշտոնական դրամաշնորհների, որոնք կնվազեն 0.2 մլրդ դրամով:

4. 2026 թվականին հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կբարելավվի 0.4% տոկոսային կետով և կկազմի 24.9%՝ պայմանավորված հարկային վարչարարության բարելավմամբ (0.3 տոկոսային կետ) և հարկային օրենսդրության բարեփոխումներով (0.2 տոկոսային կետ): Խոշոր հարկատեսակներից ամենամեծ նպաստումը կունենա ավելացված արժեքի հարկը:

Չնայած վերջին տարիներին հարկեր/ՀՆԱ ցուցանիշի որոշակի բարելավմանը, այդուհանդերձ, դրա հարաբերականորեն ցածր մակարդակն էականորեն սահմանափակում է պետության ծախսային պարտավորությունների ընդլայնման հնարավորությունները և, այս տեսանկյունից, առաջիկա տարիներին դրա աստիճանական բարձրացումը, կարծում ենք, պետք է դառնա ընդհանուր տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը: Ընդ որում, այն պետք է իրականացվի ինչպես համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքի բարելավման, այնպես էլ տնտեսության հարկային ներուժի լիարժեք օգտագործման և հատկապես ստվերային հատվածի կրճատման ուղղություններով: Այս առումով, կարծում ենք, որ հանրապետությունում իրականացվելիք տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ միայն տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովմանը, այլև տնտեսական աճի կառուցվածքի և որակի բարելավմանը՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով հարկունակ ճյուղերի զարգացման վրա:

5. Հարկային ծախսերը գործող հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտները կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսերն են, քանի որ հարկային ծախսերը հանգեցնում են համապատասխան գումարի չափով բյուջետային եկամուտների կրճատման: Հարկային ծախսերի գնահատումը շատ կարևոր նշանակություն ունի ոչ միայն պետական բյուջեի պլանավորման, այլև հարկային քաղաքականության մշակման, իրականացման և համապատասխան ճշգրտումների կատարման տեսանկյունից, ուստի հարկային ծախսերի հաշվետվության, որպես ինստիտուտի, ներդրման և շարունակական թարմացման գործընթացը բացառիկ կարևորություն է ստանում: 2026 թվականին ընդհանուր հարկային ծախսը գնահատվել է 802,847 մլրդ դրամի չափով, ինչը 31,707 մլն

դրամով կամ 4.1 տոկոսով ավելին է, քան ընթացիկ տարվա գնահատականը: 2026 թվականին հարկային ծախսերը կկազմեն կանխատեսված հարկային եկամուտների և ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է համապատասխանաբար՝ 27 և 6.7 տոկոս (տես աղյուսակ 4-ը): Այն մոտ 100 մլրդ դրամով կամ 16 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Ավելացված արժեքի հարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 670 մլրդ դրամ, շահութահարկի գծով հարկային ծախսերը՝ 90,7 մլրդ դրամ:

Աղյուսակ .

Հարկային ծախսերի գնահատականը 2026 թվականին (մլն դրամ)

Հ/Հ	Հարկային ծախսերի տեսակը, մլրդ դրամ	Հարկային ծախսերի չափը	Կշիռը հարկային եկամուտների մեջ	Կշիռը ՀՆԱ-ի մեջ
1	ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝	670,703	22.85%	5.64%
1.1.	գյուղատնտեսություն	27,437	0.93%	0.23%
1.2.	առողջապահություն	88,614	3.02%	0.75%
1.3.	կրթություն	43,340	1.48%	0.36%
1.4.	ֆինանսներ և ապահովագրություն	235,069	8.01%	1.98%
1.5.	ԱԱՀ-ի շեմ	99,544	3.39%	0.84%
1.6.	խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում	71,960	2.45%	0.61%
1.7.	ոսկու և թանկարժեք քարերի իրացում	38,732	1.32%	0.33%
1.8.	մարդասիրական օգնություն	10,050	0.34%	0.08%
1.9.	պարարտանյութերի իրացում	6,748	0.23%	0.06%
1.10.	ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում	1,785	0.06%	0.02%
1.11.	սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի	1,082	0.04%	0.01%

	շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում			
1.12.	ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում	363	0.01%	0.00%
1.13.	Օրենսգրքով սահմանված վերը չնշված այլ արտոնություններ	18,435	0.63%	0.16%
1.14.	այլ օրենքներով տրված արտառություններ	3,068	0.10%	0.03%
1.15.	Միկրոբիզնես	24,475	0.83%	0.21%
2	Շահութահարկի գծով, այդ թվում՝	90,747	3.09%	0.76%
2.1.	գյուղատնտեսություն, այդ թվում՝	40,507	1.38%	0.34%
2.1.1.	կազմակերպությունների շահույթից	3,254	0.11%	0.03%
2.1.2.	ֆիզիկական անձանց (Ա/Ձ-ների) շահույթից	37,253	1.27%	0.31%
2.2.	հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ՝ գյուղատնտեսության	1,765	0.06%	0.01%
2.3.	շահութահարկի նվազեցման արտոնություններ	331	0.01%	0.00%
2.4.	ԱԱՀ-ի շեմ	35,836	1.22%	0.30%
2.5.	միկրոբիզնես	8,811	0.30%	0.07%
2.6.	SS ոլորտի արտոնություններ	3,497	0.12%	0.03%
3	Եկամտային հարկի գծով, այդ թվում՝	14,545	0.50%	0.12%
3.1.	գյուղատնտեսության ոլորտի աշխատողների աշխատավարձ	14,545	0.50%	0.12%

4	Շրջանառության հարկի գծով, այդ թվում՝	26,852	0.91%	0.23%
4.1.	SS ոլորտի արտոնություններ	26,852	0.91%	0.23%
Ընդամենը		802,847	27.36%	6.75%

Անշուշտ, հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով բյուջետային եկամուտների կորուստը բավականաչափ մեծ ծավալ է կազմում՝ հատկապես ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում: Ընդ որում, հատկապես մտահոգիչ է այն իրողությունը, որ դրանց ծավալները վերջին տարիներին արձանագրում են աճի կայուն միտումներ:

Բնականաբար, հանրային ֆինանսների թափանցիկության ապահովման առումով բյուջետային փաստաթղթում հարկային ծախսերի գնահատականի ներկայացումը, ինչն իրականացվում է 2015 թվականից, չափազանց կարևոր է: Միևնույն ժամանակ, այն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է հանդիսանում հարկային արտոնությունների վերախմաստավորման և դրանց հիմնավորվածության ապահովման տեսանկյունից: Այլ խոսքով, յուրաքանչյուր տարի բավարարվել միայն հարկային արտառությունների հետևանքով բյուջետային եկամուտների կորուստն արձանագրելով, առանց դրանց կրճատմանն ուղղված քայլերի ձեռնարկման, կարծում ենք, արդարացված մոտեցում չէ: Ըստ էության, մասնավորապես, հանգամանքով է պայմանավորված վերջին տարիներին հարկային ծախսերի կայուն աճը, ինչը մտահոգիչ իրողություն պետք է դառնա: Այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է վերախմաստավորել հարկային արտոնությունների դերն ու նշանակությունը հարկային կարգավորման գործում և ստեղծել այնպիսի նախադրյալներ, որոնց առկայության պարագայում միայն դրանք կապահովեն անհրաժեշտ սոցիալ-տնտեսական էֆեկտ: Մասնավորապես, անհրաժեշտ է ապահովել հարկային արտոնությունների առավելագույն հասցեականություն և բացառել տարբեր եղանակներով դրանցից անհիմն օգտվելու հնարավորությունը, իրականացնել հարկային ծախսերի չափի և ստացված սոցիալ-տնտեսական էֆեկտի համադրում՝ դրանց արդյունավետության գնահատման և չհիմնավորված արտոնություններից հրաժարման նպատակով: Բացի այդ, հաշվի առնելով մասնավորապես հանրապետությունում ներկայումս ձևավորված հարկային ծախսերի ծավալը, կարծում ենք, ժամանակն է իրականացնել գործող հարկային արտոնությունների համակողմանի վերլուծություն՝ դրանց տեսակներից

յուրաքանչյուրի հիմնավորվածության, արդարացիության և սոցիալական ու տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից:

6. Առաջիկա բյուջետային տարում պետական բյուջեի ծախսային մասը կկազմի 3 տրիլիոն 628.5 մլրդ դրամ, ինչն ընթացիկ տարվա ցուցանիշը գերազանցում է մոտ 187 մլրդ դրամով: Ինչ վերաբերում է բյուջետային ծախսերի կառուցվածքին, ապա ծախսերի ամբողջ ծավալի 80.6%-ը կամ 2 տրիլիոն 924.5 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 19.4%-ը կամ 704.1 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին:

2026 թվականին պլանավորվող ընդհանուր ծախսերի կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը կունենան սոցիալական ոլորտի ծախսերը՝ 44.4 տոկոս, ՀՆԱ-ի նկատմամբ ունենալով 13.5 տոկոս հարաբերակցություն (տես աղյուսակ 5-ը):

Աղյուսակ 5

ՀՀ 2022-2026թթ. պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլն. դրամ)

Ցուցանիշ	Փաստ			Բյուջե	Ծրագիր
	2022	2023	2024	2025	2026
Ընդամենը	2,242.6	2,547.6	2,955.3	3,441.6	3,628.5
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	26.4%	26.8%	29.0%	31.6%	30.4%
1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այդ թվում՝ պահուստային ֆոնդեր)	407.4	522.5	671.3	842.8	918.3
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	4.8%	5.5%	6.6%	7.7%	7.7%
Ընդհանուր ծախսերում (%)	18.2%	20.5%	22.7%	24.5%	25.3%
2. Պաշտպանություն, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	677.3	733.4	776.9	915.4	813.2
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	8.0%	7.7%	7.6%	8.4%	6.8%

Ընդհանուր ծախսերում (%)	30.2%	28.8%	26.3%	26.6%	22.4%
3. Տնտեսական ոլորտ	192.1	217.8	228.9	262.5	285.9
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.3%	2.3%	2.2%	2.4%	2.4%
Ընդհանուր ծախսերում (%)	8.6%	8.5%	7.7%	7.6%	7.9%
4. Սոցիալական ոլորտ	965.8	1,073.9	1,278.2	1,420.9	1,611.2
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	11.4%	11.3%	12.5%	13.0%	13.5%
Ընդհանուր ծախսերում (%)	43.1%	42.2%	43.3%	41.3%	44.4%

7. Նախագծով ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը կկազմի շուրջ 537.5 մլրդ դրամ կամ ՀՆԱ 4.5 տոկոսը (տես աղյուսակ 6-ը): Առաջիկա տարում բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից, համապատասխանաբար՝ 266.2 մլրդ դրամի և 271.3 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 6

ՀՀ 2022-2026թթ. պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլրդ դրամ)

Ցուցանիշներ	Փաստ			Բյուջե	Ծրագիր
	2022	2023	2024	2025	2026
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները	179.5	188.9	376.1	604	537.5
Ա. Ներքին աղբյուրներ	288.1	412.4	359.1	255.4	266.2
Բ. Արտաքին աղբյուրներ	(108.6)	(223.5)	17.0	348.6	271.3

8. ՀՀ 2026թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական պարտքը կկազմի 5,820 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 52.9%-ը, իսկ 2026 թվականի տարեվերջին այն կկազմի 6,569 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 55.0%-ը: (տես աղյուսակ 7-ը):

Աղյուսակ 7.

Պետական պարտքի կառուցվածքը 2024-2026թթ.

	31.12.2024	31.12.2025	31.12.2026
ՀՀ պետական պարտք	5,125	5,820	6,569
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	2,592	2,945	3,359
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	232	246	184
ներքին պետական պարտք	2,533	2,875	3,210
տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ			
ՀՀ պետական պարտք	50.3	52.9	55.0
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	25.4	26.8	28.2
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	2.3	2.2	1.5
ներքին պետական պարտք	24.9	26.1	26.9

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը կկազմի 5,573 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 50.7 տոկոսը և 2024 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կաճի 2.7 տոկոսային կետով:

Աղյուսակ 8.

ՀՀ կառավարության պարտքը 2024-2026թթ.

	31.12.2024	31.12.2025	31.12.2026
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	4,892.8	5,573.8	6,384.7
ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար	12,338.2	14,147.4	15,331.5
ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ի նկատմամբ	48.0	50.7	53.5

2026 թվականին Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 3.5%-ը կամ 432.2 մլրդ դրամ, ինչը 42.1 մլրդ դրամով գերազանցում է 2025 թվականի ցուցանիշը (տես աղյուսակ 9-ը):

Աղյուսակ 9.

Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ)

	2024	2025	2026
Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար), մլրդ դրամ	313.6	381.1	423.2
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	3.1	3.5	3.5
Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույք, %	7.2	7.3	7.1

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱԶՅԱՆ

Կատարողներ՝

բաժնի պետ՝ Ա. Թամազյան (հեռ.՝ 011 513-668)

գլխավոր մասնագետ՝ Գ. Կիրակոսյան (հեռ.՝ 011 513-603)

20.10.2025թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

«Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) քննարկվել է ՀՀ ԱԺ աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության սոցիալ, կրթական, առողջապահական փորձաքննության բաժնում:

Նախագիծը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությամբ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև բյուջետային հարաբերությունները կարգավորող մյուս օրենքներով սահմանված պահանջներին:

Նախագծով ՀՀ 2026 թվականի բյուջեն պլանավորվում է՝

- եկամուտների գծով՝ 3,261.9 մլրդ դրամ,
- ծախսերի գծով՝ 3,799.4 մլրդ դրամ,
- դեֆիցիտը՝ 537.5 մլրդ դրամ:

Նախագծի ուսումնասիրության և քննարկման արդյունքում ձևավորվել են մի շարք նկատառումներ, որոնցից հիմնականները կայանում են հետևյալում:

Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին հանրապետությունում սոցիալական ոլորտի ծախսերը դրսևորել են աճի միտում (տես՝ աղյուսակը):

Սոցիալական ոլորտի 2022-2026թթ. բյուջետային ծախսերը, մլրդ. դրամ

Աղյուսակ.

Ցուցանիշներ	Փաստ			Բյուջե	Ծրագիր
	2022	2023	2024	2025	2026
Սոցիալական ոլորտ ընդամենը	965.8	1,073.9	1,295.2	1,423.5	1,611.2
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	11.4	11.3	12.3	12.9	13.5
Ընդհանուր ծախսերում (%)	43.1	42.2	40.4	40.9	44.4
1. Կրթություն	165.4	183.6	290.7	306.2	361.6
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.9	1.9	2.8	2.8	3.0
Ընդհանուր ծախսերում (%)	7.4	7.2	9.1	8.8	10.0
2. Սոցիալական պաշտպանություն	614.5	705.8	794.5	905.7	993.0
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	7.2	7.4	7.6	8.2	8.3
Ընդհանուր ծախսերում (%)	27.4	27.7	24.8	26.0	27.4
3. Առողջապահություն	142.2	141.3	169.9	164.5	212.4
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.7	1.5	1.6	1.5	1.8
Ընդհանուր ծախսերում (%)	6.3	5.5	5.3	4.7	5.9
4. Հանգիստ, մշակույթ և կրոն	43.9	43.3	40.2	47.2	44.3

ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.5	0.5	0.4	0.4	0.4
Ընդհանուր ծախսերում (%)	2.0	1.7	1.3	1.4	1.2

1. ՀՀ ԿԳՄՄ նախարարության գծով ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել 420,224.9 մլն դրամ:

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը: Մասնավորապես.

Հանրակրթության ծրագրի գծով՝ 139,719.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ապահովել անվճար և որակյալ հանրակրթություն: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել պարտադիր կրթության երեք մակարդակներում սովորողների ուսուցման գծով: Մասնավորապես. ծախսերը հաշվարկվել են 1321 հանրակրթական դպրոցների 21.2 հազար դասարաններում ընդգրկվող, միջին տարեկան հաշվարկով, 417.4 հազար աշակերտի ուսուցման, հատուկ և մասնագիտացված հանրակրթության մեջ ընդգրկվող՝ համապատասխանաբար, 0.5 և 3.6 հազար սովորողների կրթության գծով:

Արտադպրոցական դաստիարակության ծրագրի գծով՝ 4,008.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել հանրակրթական ուսուցման համակարգում ընդգրկված երեխաների ֆիզիկական, հոգևոր և գեղագիտական զարգացմանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:

Ապահով դպրոց ծրագրի գծով՝ 836.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ դպրոցներին սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացում, դպրոցի անձնակազմի և աշակերտների անվտանգության ապահովման մակարդակի բարձրացում՝ կիրառելով ներառական և երեխայակենտրոն մոտեցում:

Կրթության որակի ապահովում ծրագրի գծով՝ 19,536.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ընթացիկ աշխատանքների, բարեփոխումների միջոցով կրթության ոլորտում իրականացվող միջոցառումների, մատուցվող ծառայությունների բովանդակության և կազմակերպման որակի շարունակական բարելավում: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել հանրակրթության պետական կրթական չափորոշիչի ու առարկայական ծրագրերին համապատասխան ուսուցիչների վերապատրաստման, կամավոր ատեստավորման արդյունքում 12.1 հազար ուսուցիչներին

հավելվածարների տրամադրման, հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա 9.0 հազար ուսուցիչների վերապատրաստման գծով:

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում ծրագրի գծով՝ 4,045.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովում՝ զարգացման առանձնահատկություններին համապատասխան և անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցով: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության, ինչպես նաև նշված կենտրոնների՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների ատեստավորման համակարգի ներդրման գծով:

«Նախադպրոցական կրթություն» ծրագրի գծով՝ 1,883.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ապահովել հասանելի և որակյալ նախադպրոցական կրթություն: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել նախակրթարաններում ընդգրկվող 7.1 հազար երեխաների, մինչև 5 տարեկան կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 1428, 0-2 տարեկան 180, 2026 թվականի սեպտեմբերի 1-ից՝ սոցիալապես անապահով ընտանիքների 2465 երեխաների նախադպրոցական կրթության ապահովման, նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստման, վերջիններիս տարակարգի շնորհման արդյունքում հավելվածարի տրամադրման գծով:

Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի նպատակն է՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար, կիրառական և թեմատիկ հետազոտությունների իրականացում, ենթակառուցվածքի և ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում և զարգացում, գիտական ներուժի վերարտադրության ապահովում: Ծրագրի գծով՝ 27,296.0 մլն դրամ:

«Ակադեմիական քաղաքի ստեղծում» ծրագրի գծով՝ 4,966.4 մլն դրամ:

Նախատեսվում է շարունակել «Ակադեմիական քաղաք» նախագծի իրականացումը, «Ակադեմիական քաղաք» հիմնադրամին պետական աջակցությունը և «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման համար միջազգային խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումն ու պայմանագրերի սպասարկումը:

Մշակույթի ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվելու են 5 ծրագրերի իրականացմանը:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի համար՝ 884.4 մլն դրամ:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի նպատակն է աջակցել կինոարվեստի և կինոարտադրության զարգացմանը, հայկական ավանդույթների շարունակականության ապահովմանը և կինոարվեստի հանրահռչակմանը:

Մշակութային ժառանգության ծրագրի համար՝ 5,798.4 մլն դրամ:

Մշակութային ժառանգության ծրագրի նպատակն է ապահովել մշակութային ժառանգության պահպանումը, օգտագործումը, համալրումը և հանրահռչակումը:

Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի համար՝ 1,778.6 մլն դրամ:

Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի նպատակն է նպաստել գրականության հրատարակմանը, տարածմանը և հանրահռչակմանը:

Արվեստների ծրագրի համար՝ 10,809.1 մլն դրամ:

Արվեստների ծրագրի նպատակն է նպաստել ազգային հենքի վրա ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարարվեստի զարգացմանը և հանրահռչակմանը:

Սպորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվելու են 2 ծրագրերի իրականացմանը:

«Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի համար՝ 7,017.0 մլն դրամ:

Մեծ նվաճումների սպորտ ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում մեծ սպորտի շարունակական զարգացմանը և միջազգային հարթակներում ՀՀ դիրքի բարելավմանը:

2026 թվականին նախատեսված հատկացումները կուղղվեն մասն Հայաստանում խոշոր մրցաշարերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների կազմակերպմանը և անցկացմանը, ինչպես մասն Հայաստանում Ֆրանկոֆոնիայի մարզամշակութային խաղերի նախապատրաստման աշխատանքների իրականացմանը:

«Մասսայական սպորտ» ծրագրի համար՝ 5,000.7 մլն դրամ:

Մասսայական սպորտ ծրագրի նպատակն է ապահովել բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը:

Երիտասարդության ծրագրի համար՝ 2,910.3 մլն դրամ:

Երիտասարդության ծրագրի նպատակն է նպաստել սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին երիտասարդների լիարժեք ներգրավմանը և նրանց ստեղծագործական ներուժի ամբողջական դրսևորմանը:

2. ՀՀ առողջապահության նախարարության գծով ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել 210,911.7 մլն դրամ

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը: Մասնավորապես.

Հանրային առողջության պահպանում ծրագրի գծով՝ 7,496.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը և նվազեցումը, կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ պայքարը:

Դեղապահովում ծրագրի գծով՝ 7,809.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակը դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի ապահովումն է, ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա կենսականորեն անհրաժեշտ դեղերի ֆինանսական և տնտեսական մատչելիության բարձրացումը:

Մոր և մանկան առողջության պահպանում ծրագրի գծով՝ 5,362.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մոր և մանկան առողջության պահպանումը, կանանց և երեխաներին մատուցվող բժշկական ծառայությունների մատչելիության և որակի բարելավումը, որի արդյունքում ակնկալվում է մանկական և մայրական մահացության և հիվանդացության կրճատում, կանանց վերարտադրողական առողջության բարելավում:

Շտապ բժշկական օգնություն ծրագրի գծով՝ 2,716.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մարդու կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող վիճակներում որակյալ շտապ բժշկական օգնության ծառայությունների տրամադրումը, որի արդյունքում նախատեսվում է բարելավել շտապ օգնության համակարգի պատրաստվածությունը, արձագանքման արագությունը, հասանելիության և բժշկական օգնության ծառայությունների որակը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված է իրականացնել 289,770 հատ շտապ օգնության և 19 հատ օդային ճանապարհով սանիտարական ավիացիայի կանչեր:

Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում ծրագրի գծով՝ 138,302.9 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ոչ վարակիչ հիվանդությունների (մասնավորապես՝ սիրտանոթային, շաքարային դիաբետի և չարորակ նորագոյացությունների) բուժման արդյունավետության բարձրացումը: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է նվազեցնել ոչ վարակիչ հիվանդություններով պայմանավորված հիվանդացությունը և մահացությունը:

Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն ծրագրի գծով՝ 16,529.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության հասանելիության և մատչելիության մակարդակի բարձրացումը, հիվանդանոցային որակյալ բժշկական օգնության ապահովումը:

Ծրագիրը հանդիսանում է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված շահառուների սոցիալական երաշխիքի առողջապահական բաղադրիչը և ապահովում է բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների, ԼԳ-ից տարհանված բնակչության, զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքի անդամների, պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների և թրաֆիքինգի զոհերի գծով բժշկական օգնության ծառայություններից օգտվելու 175,808 դեպքի, ինչպես նաև ստոմատոլոգիական բժշկական օգնության գծով 15,465 դեպքի, մարդու օրգանների փոխպատվաստման 10 դեպքի իրականացումը:

Վարակիչ հիվանդությունների կանխարգելում ծրագրի գծով՝ 1,330.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է վարակիչ և բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների (մալարիա, տուբերկուլյոզ, ՄԻԱՎ/ԶԻԱՀ և այլն) վաղ հայտնաբերումը, արդյունավետ հակազդումը և բժշկական օգնության ապահովումը, որի իրականացման

արդյունքում նախատեսվում է նվազեցնել վարակի փոխանցումը, վարակիչ հիվանդություններով պայմանավորված հիվանդացությունը և մահացությունը:

3. Աշխատանքի և սոցիալական նախարարության գծով ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով նախատեսվում է շուրջ 993,017.6 որի շրջանակներում կիրականացվեն հետևյալ ծրագրերը: Մասնավորապես.

Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն ծրագրի համար նախատեսվում է 25,163.6 մլն դրամ, որի շրջանակում

- ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղվող նպաստի գծով նախատեսվել է 24,466.4 մլն դրամ՝ նպաստ կտրամադրվի շուրջ 45968 ընտանիքի,

- սոցիալական դեպքի վարման ծառայությունների ձեռքբերմանը կուղղվի 78.8 մլն դրամ՝ 105750 այցելության համար,

- որոշակի սոցիալական կարգավիճակ կամ գնահատված սոցիալական կարիք ունեցող 702 ընտանիքի սոցիալական շտապ օգնություն ցուցաբերելու նպատակով կտրամադրվի 27.1 մլն դրամ,

- սոցիալական բնակարանային ֆոնդի 20 շենքերում ապրող անձանց օրենսդրությամբ սահմանված սպասարկման ծառայությունների մատուցման համար կհատկացվի 55.4 մլն դրամ,

- ժամանակավոր կացարաններում բնակվող 508 փախստականների կենցաղային խնդիրների լուծմանը կուղղվի 34.8 մլն դրամ:

Սոցիալական փաթեթների ապահովում ծրագրի շահառուներին տրամադրվող միջոցները 2015թ. հունվարի 1-ից կազմում են տարեկան առավելագույնը 72,000 դրամ (համամասնորեն նվազում է կախված աշխատողի ծանրաբեռնվածությունից (աշխատաժամանակի տևողությունից)):

Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում ծրագրին նախատեսվում է ուղղել 25,987.0 մլն դրամ, այդ թվում՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստների գծով՝ 7,010.4 մլն դրամ, մայրության նպաստի գծով՝ 18,848.1 մլն դրամ աշխատող՝ 17340 և չաշխատող՝ 18660 անձանց հաշվարկով:

Բնակարանային ապահովում ծրագրի իրականացման համար նախատեսվում է 15,625.4 մլն դրամ, որը հատկացվելու է ուղղել երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանը՝ 107.8 մլն դրամ՝ 15 շահառուի համար, ՀՀ

ՊՆ համակարգի զոհված (մահացած) առաջին, երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամ զինծառայողների 40 անօթևան ընտանիքների բնակարանով ապահովմանը և բնակարանային պայմանների բարելավմանը՝ 494.0 մլն դրամ, ՀՀ ՊՆ համակարգի՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող 67 զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների բնակարան ձեռք բերելուն՝ 921.0 մլն դրամ: 2026թ. նախատեսվում է նաև Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված 3946 ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովմանն ուղղել 7,686.6 մլն դրամի չափով ֆինանսական աջակցություն՝ հիփոթեքային վարկի գծով մայր գումարի և տոկոսագումարի սուբսիդավորման համար, ինչպես նաև 6,414.2 մլն դրամի չափ գումար է նախատեսվում ՀՀ սահմանամերձ գյուղական բնակավայրում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով 2400 շահառուի համար: 1.8 մլն դրամի շրջանակում պատժից ազատվող այն դատապարտյալներին, ովքեր չունեն բնակության վայր կտրամադրվի բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում՝ մինչև վեց ամիս ժամկետով՝ ամսական 60.0 հազ. դրամի չափով:

Կենսաթոշակային ապահովություն ծրագրի իրականացմանը նախատեսվում է հատկացնել 590,765.1 մլն դրամ, որից 244,000.0 մլն դրամը կուտակային կենսաթոշակն է՝ 498910 մասնակցի հաշվարկով:

2026թ. պահպանվելու են 2025թ. գործող՝ հիմնական կենսաթոշակի չափերը, աշխատանքային ստաժի, զինվորական ծառայության չափերը, պարտադիր ժամկետային (շարքային) զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում ծրագրին 2026թ. նախատեսվում է շուրջ 4,497.6 մլն դրամ, այդ թվում՝ 651.2 մլն դրամը նախատեսվում է ուղղել Մեծամորում հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ կյանքի կենտրոնի կառուցմանը:

Ծրագրի շրջանակում հաշմանդամություն ունեցող անձանց պետական հավաստագրերի հիման վրա նախարարության կողմից որակավորված կազմակերպությունների կողմից 3,036.6 մլն դրամի շրջանակում կտրամադրվեն 27826 աջակցող միջոց (ֆունկցիոնալ պրոթեզներ, օրթեզներ, քայլակներ, անվասայլակներ, լսողական սարքեր և այլն):

Ավանդների փոխհատուցում ծրագրի իրականացման համար նախատեսվում է 1,010.0 մլն դրամ, որի շրջանակում «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող և նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների փոխհատուցում կստանան շուրջ 5584 շահառու. փոխհատուցում ստանալու իրավունք կտրվի նաև մինչև 1944 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված ավանդատու անձանց:

Ճգնաժամների հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն ծրագրի համար 2026թ. նախատեսվում է 55,000.0 մլն դրամի շրջանակում աջակցել Ղարաբաղից բռնի տեղահանված 71331 շահառուի, ընդ որում Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սոցիալական աջակցություն՝ 61754 շահառուի և բնակարանային խնդիրների լուծման համար՝ 9577 շահառուի:

Ընդհանուր առմամբ, կարծում ենք, որ 2026 թվականի պետական բյուջեի նախագծով սոցիալական, կրթական և առողջապահական բնագավառներին նախատեսված հատկացումները կնպաստեն այդ ոլորտներում առկա մի շարք հիմնախնդիրների լուծմանը և դրված նպատակների ձեռքբերմանը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Լ. Մարկոսյան

Կատարող՝ Ա. Գալստյան (հեռ. 011-513-235), (12-35)

15.10.2025թ.